Պարզաբանումների ցուցակ

| | | | |
|---|---|---|---|
| #Պարզաբանման համար | 1 | Հրատարակման ամսաթիվ | 02/03/22 |
| Հարցման վերնագիր | | | Պարզաբանում |
| Հարց | | | |
| Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի, մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:Խնդրում եմ պարզաբանել ինչու ԱԳՆ-ԲՄԾՁԲ-22/01 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպված չէ մեկից ավելի չափաբաժիններով, որոշակի աշխարհագրական տարածաշրջաններով | | | |
| Հարցին կցված ֆայլ : <Կցված ֆայլեր չկան > | | | |
| Պատասխան | | | |
| Ի պատասխան ձեր դիտարկման, հայտնում ենք, որ ԱԳՆ-ի արտերկիր գործուղված աշխատակիցների պարագայում՝ տարվա ընթացքում՝ աշխատանքային գործունեությամբ պայմանավորված երբեմն անհրաժեշտություն է առաջանում աշխատակիցների տեղափոխությունների՝ աշխատանքային գործունեությունը մի երկրից մեկ այլ երկրում՝ հաճախ տարբեր աշխարհագրական տարածաշրջաններում  շարունակելու նպատակով: Նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ այդիպիսի դեպքերը քիչ չեն, իսկ տարբեր չափաբաժիններով մրցույթի պարագայում, այսինքն՝ հնարավոր երեք տարբեր ապահովագրական ընկերությունների դեպքում՝ նման տեղափոխությունները (ապահովագրական մի ընկերության ծածկույթից հանել մյուսի ծածկույթում  ներառել) հավելյալ բարդություններ կստեղծեն, մասնավորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատակցի ընտանիք ունենալու պարագայում  նրա տեղափոխությունը ենթադրում է նաև ընտանիքի անդամների տեղափոխություն: | | | |
| Պատասխանին կցված ֆայլ :<Պատասխանին կցված ֆայլեր չկան > | | | |

| | | | |
|---|---|---|---|
| #Պարզաբանման համար | 2 | Հրատարակման ամսաթիվ | 04/03/22 |
| Հարցման վերնագիր | | | Հրավերի վերաբերյալ պարզաբանում |
| Հարց | | | |
| Համաձայն ԱԳՆ-ԲՄԾՁԲ-22/01 ծածկագրով հրավերի 2.4 կետի Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում  և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի 30 տոկոսի չափով: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր | | | |

| |
|---|
| կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard  Poors ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Խնդրում եմ տրամադրել Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափը 03. 03. 2022 թվականի դրությամբ |
| Հարցին կցված ֆայլ : <Կցված ֆայլեր չկան > |
| Պատասխան |
| Պարզաբանումը կցվում է |
| Պատասխանին կցված ֆայլ :<Varkanish.docx > |